ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«09» հոկտեմբեր 2019թ.

ք. Երևան, Ս. Դավթի 87ա

ՈՐՈՇՈՒՄ No. 1161/01-Ա

Չկատարված հարկային պարտավորությունները գանձելու մասին

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետի ժ/պ Նաիրա Ավանեսյանս քննարկելով «ԻՆՏԵՐԴԵԱՆԵՐ» ՍՊԸ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի տվյալների «ԻՆՏԵՐԴԵԱՆԵՐ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00141678, հասցե՝ ք. Երևան, ԿՈՄԻՏԱՍԻ Պ. 32/42, գրանցման համար՝ 264.110.851065) նկատմամբ 10.06.2019թ-ին հարուցված վարչական վարույթի շրջանակներում գանձման ենթակա պարտավորությունը կազմում է 675.075 դրամ, որից ապառք՝ 505.886 դրամ, տույժ՝ 169.189 դրամ:

Վերոհիշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, հարուցվել է վարչական վարույթ չկատարված պարտավորությունը գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով, որի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

Վերը նշված պարտավորության մեջ ներառված շրջանառության հարկի գծով 109.068 դրամը, որն առաջացել է 2019թ-ի առաջին եռամսյակի հաշվարկից, եկամտային հարկի գծով 173.914 դրամը, որն առաջացել է 2018 հոկտեմբերից-2019 թվականի մայիս ամիսների եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկներից սույն որոշմամբ գանձման ենթակա չեն:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորությունը կազմում է **392.093** դրամ, այդ թվում՝

եկամտային հարկի գծով պարտավորությունը կազմում է 120.741 դրամ, որից ապառք՝ 72.105 դրամ, տույժ՝ 48.636 դրամ, որն առաջացել է 2018 թվականի մարտ-սեպտեմբեր ամիսների եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկներից, ինչպես նաև ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածների համաձայն հաշվարկված տույժերից,

շրջանառության հարկի գծով պարտավորությունը կազմում է 271.352 դրամ, որից ապառք՝ 162.687 դրամ, տույժ՝ 108.665 դրամ, որն առաջացել է 2018 թվականի 1-3-րդ եռամսյակների հաշվարկներից, ինչպես նաև ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածների համաձայն հաշվարկված տույժերից:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Համաձայն <<**Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին**>> ՀՀ օրենքի՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրը հարկային եկամուտներն ու պետական տուրքերն են, որոնց հավաքագրման շնորհիվ են կատարվում նույն օրենքով նախատեսված հանրային, պաշտպանության, հասարակական, անվտանգության, դատական գործունեության և այլ ոլորտներում նախատեսված ծախսերը: Նշվածից ելնելով և հաշվի առնելով պարտավորությունների գանձման կարևորագույն հանրային նշանակությունը՝ **սույն որոշումը ենթակա է անհապաղ կատարման**:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 64-րդ, 66-րդ կետերով, 398-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով, <<Հարկային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ մասով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «ԻՆՏԵՐԴԵԱՆԵՐ» ՍՊԸ-ից գանձել 392.093 դրամ պարտավորության գումար:
2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ապահովող ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն հարկ վճարողի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ Ժ/Պ **Ն. ԱՎԱՆԵՍՅԱՆ**

Կատարող՝ Գ. Թադևոսյան
ԻՎ ՀԳ և ՊԿԱ բաժին
Հեռ. 011-54-91-91/9147/

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Հարկ վճարողի չկատարված պարտավորությունների գանձման վերաբերյալ հարկային մարմնում առկա մեկից ավելի վարույթների շրջանակներում ընդունված և ուժի մեջ մտած որոշումներով գանձման ենթակա ընդհանուր պարտավորությունը 500.000 ՀՀ դրամ գումարը գերազանցելու դեպքում, որոշումներն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորությունների վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի: